

բեմբասացութեան. — «Յիրաւի երանեմ զայն-  
պիսի ժողովուրդն՝ որ այնպէս ինքեան ինք-  
պէս» — նկէին, յայնպիսի յետեալ ժամանակիս  
եւ այնքան, մինչ զի նրբ-միտ ազգն լատինացւոց  
զարմացեալ հիանային նրբ-միտ-աւստ-աշ-  
արող-նեան նորին. զի յոյժ կատարեալ ունէր զփի-  
լիսոփայական եւ զաստուածաբանական գիտու-  
թիւնն» (Հաննէ էջ 131 :

Այլոտ իր յաջողութիւնները, կրնամ ըսել,  
գրեթէ իր ճարտարախօսութեան կը պարտէր: Թէ  
բեմի վրայ եւ թէ առանին խօսակցութեան մէջ,  
նոյն գրաւիչ, նոյն յազմող լեզուն էր:

Հակառակ իր համեստութեան, զոր շափա-  
զանցօրէն կը մշակէ իր Յիշատակարաններուն մէջ  
գիտել տալու համար թէ ինքը զուրկ է Աստուա-  
ծաբանական շնորհէն, Ս. Գրքերը մեկնելու իմաս-  
տութենէն (Անտառին Յիշատակարանը), Այլոտը կը  
ներկայանայ պատմութեան առջեւ իբր ժամանակա-  
կից ուսումներով զարգացած ուսեալ Արագա-  
պետ մը:

## Կ Ա Լ Ա Տ Գ Ի Ր Ա Ս Է Ի Ր

### Ը.

Այլոտ իր պատրիարքական գործունէութեան  
եւ իր ուսեալ հայ վարդապետի կոչումը պսակեց  
գրական, լաւ եւս գրասիրական արդիւնքներով:

Իր գրչէն ելած՝ ամբողջ գործ մը չունինք  
— այժմ, բաց ի իր Յիշատակարաններէն, որոնց  
մին ինքն Այլոտ հրատարակած է Ջենոբ Գլակի  
հետ. իսկ միւսները կը մնան ձեռագիր հատորնե-  
րու մէջ:

Ասի պատճառ մը չէ, սակայն, որ մեր «հա-  
մալսարանական»ը չճանչնանք իբր գրական գէմք  
մը: Կրնայ մտածուիլ որ այնքան բարդ եւ ծանր  
զբաղումներու մէջ՝ ատեն պիտի չգտնէր մատենա-  
գրելու, թէեւ այս մասին չեմ կրնար վճռական